ՀՄԿ

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականների դասավանդման հմտությունների
զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Վանաձորի Ստ. Շահումյանի անվան N 6 հիմնական դպրոց

Թեմա՝ «Մեթոդների ընտրությունն աշխարհագրության ուսուցման ընթացքում»

Վերապատրաստող, մենթոր՝ Գ. Վարդանյան

Ուսուցիչ՝ Ելենա Գրիգորիի Պողոսյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ 1. Մեթոդների ընտրությունն ուսուցման ընթացքում.....5

1.1 Համագործակցային մեթոդների կիրառումն աշխարհագրության դասերին.....5

1.2 Ուսուցման հնարների կիրառումն աշխարհագրության դասերին.....7

1.3 Աշխարհագրության ուսուցման մեթոդների կիրառումը դպրոցական-ների հետազոտական կարողությունների զարգացման նպատակով.....10

Եզրակացություններ, առաջարկություններ.....13

Օգտագործված գրականության ցանկ.....15

Ներածություն

Հետազոտական աշխատանքի թեման է «Մեթոդների ընտրությունն աշխարհագրության ուսուցման ընթացքում»:

Արդիականությունը: Կրթության հիմնախնդիրների լուծման ժամանակակից առաջնահերթ ուղղությունը պետք է փնտրել ներկայումս առկա, գործնականում մատչելի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների և տեխնիկական միջոցների կիրառման մեթոդաբանության մեջ: Այս մոտեցումները հանրակրթական դպրոցում պետք է ուղղվեն ուսուցման որակի բարձրացմանը և նպաստեն ապագայում սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը:

Մանկավարժական արդի գաղափարներին համաձայն՝ հանրակրթական դպրոցում է դրվում այն կայուն հիմքը, որի վրա ուսուցիչն ի զորու կլինի կառուցել երեխայի խոստումնալից ապագան, որի նախագծումն ուսուցչի հիմնական խնդիրն է այժմյան արագ փոխակերպվող և տեղեկատվությամբ հեղեղված աշխարհում: Նման տեղեկատվայնացումը գերակա նշանակություն ունի կրթության այժմյան որակի, 21-րդ դարի աշակերտի տեղեկատվական մշակույթի և նրա գիտական աշխարհայացքի ձևավորման ու աշխարհաճանաչողության համար: Միաժամանակ դա արտահայտվում է հիմնականում ուսուցման մեթոդների լայն կիրառմամբ, որոշ մեթոդների վերանայմամբ, երբ ուսումնական գործընթացն ինքնին խթանում է սովորողների ճանաչողական ակտիվությանը, նպաստում է ուսումնական նյութի արդյունավետ յուրացմանն ու հիմնարար գիտելիքների ձեռքբերմանը: Այստեղից էլ ուրվագծվում են աշխարհագրության ուսուցման ընթացքում մեթոդների ընտրողական և նպատակային կիրառման արդիականությունը:

Աշխատանքը շարադրվել է պրակտիկայի, համապատասխան գրականության ուսումնասիրման, դրանց վերլուծման և համադրման հիման վրա:

Աշխատանքի նպատակն է՝ հիմնավորել և բացահայտել աշխարհագրություն առարկայի ուսուցման մեթոդների ընտրությամբ դասի արդյունավետության բարձրացման ուղիները: Ուսումնասիրման ժամանակ աշխատանքում առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները.**

Հետազոտել աշխարհագրության ուսուցման մեթոդների բովանդակության, կատարելագործման ուղիները:

Ուսումնասիրման օբյեկտը և առարկան: Որպես ուսումնասիրման օբյեկտ ընտրվել է աշխարհագրության ուսուցման մեթոդիկան, որպես ուսումնասիրման առարկա՝ դասավանդման (ուսուցման) մեթոդները և հնարները:

Կիրառական նշանակությունը: Աշխատանքն ունի գիտաճանաչողական, տեսական և գործնական նշանակություն: Արդյունքները կարող են օգտագործվել որպես տեղեկատվական հիմք դասապրոցեսի կազմակերպման համար:

Աշխատանքը կատարելիս օգտագործվել են նկարագրական, վերլուծական, համեմատական-աշխարհագրական և աշխարհագրական հետազոտման այլ մեթոդներ:

Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, 1 գլխից, առանձին ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ծավալը կազմում է _____ էջ:

1-ին գլխի 1-ին ենթակետով լուսաբանել ենք աշխարհագրության ուսուցման ընթացքում կիրառվող համագործակցային մեթոդների դերը, դրանց կարևորությունը: 2-րդ ենթակետում անդրադարձել ենք աշխարհագրության դասերին կիրառվող ուսուցման որոշ հնարներին, դրանց կիրառման սկզբունքներին, առաջնահերթություններին՝ ըստ դասի փուլերի: 3-րդ ենթակետում ներկայացրել ենք աշխարհագրության ուսուցման մեթոդների կիրառման ազդեցությունը դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման վրա:

ԳԼՈՒԽ 1. Մեթոդների ընտրությունը դասավանդման ընթացքում

1.1 Համագործակցային մեթոդների կիրառումն աշխարհագրության դասերին

Մեթոդը հունարեն «metodos» բառի հայերեն թարգմանությունն է, որը նշանակում է նպատակին հասնելու եղանակ, ուղի, որոշակի կարգավորված գործունեություն: Դիդակտիկան, ուսուցման մեթոդ ասելով, հասկանում է այն եղանակները, ուղիները, հնարներն ու ձևերը, որոնցով զինվելով՝ սովորողները ուսուցչի համագործակցությամբ ձեռք են բերում գիտելիքներ, հմտություններ, կարողություններ, որոնք ձևավորում են նրանց աշխարհահայացքը, զարգացնում ճանաչողական ունակություններն ու գործնական հմտությունները: Ուսուցման մեթոդները ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչներից են[1]:

Մեծ մանկավարժ-գիտնական Ի. Պ. Պոդլասին նշում է, որ «Մեթոդը ուսուցման գործընթացի միջուկն է, որը կապող օղակ է նախատեսված նպատակի և վերջնական արդյունքի միջև»: Նրա դերը «նպատակներ-բովանդակություն-մեթոդներ-ձևեր-ուսուցման միջոցներ» համակարգում համարվում է որոշիչ:

Դիդակտիկայում տրվել է ուսուցման մեթոդ հասկացության առավել լիարժեք ձևակերպումը, այն է՝ «Ուսուցման մեթոդն ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործունեության համակարգված եղանակ է ուղղված կրթական նպատակների իրականացմանը»: Ուսուցչի և աշակերտների միջև ուսուցման ժամանակ շփումը հիմնականում իրականացվում է համագործակցությամբ, որտեղ աշակերտն էլ իրեն զգում է որպես այդ գործընթացի կարևոր կողմ: Դա բարձրացնում է նրանց ինքնագնահատականը՝ ներգրավվածությունը դասի կազմակերպման և ընթացքի շուրջ: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Մեթոդի ընտրության վրա կարող են ազդել՝

- ուսուցման նպատակները և խնդիրները,

[1] Սարգսյան Խ. Բ., Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա: Երևան, 2002թ., էջ 118:

- նյութի բովանդակությունը,
- ուսումնական նյութի ծավալը և բարդությունը,
- նոր գիտելիք ձեռք բերելու նկատմամբ աշակերտների շահագրգռվածությունը և համագործակցային հմտությունների մակարդակը,
- աշակերտների տարիքային առանձնահատկությունները,
- ուսումնական ժամաքանակը,
- ուսուցման նյութատեխնիկական պայմանները,
- ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունները,
- աշակերտների թվաքանակը դասարանում,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը և այլն[2]:

Համագործակցային ուսուցման արդյունավետության համար շատ կարևոր է ուսուցչի դասի պլանավորման նախապատրաստական աշխատանքների գրագետ կազմակերպումը: Այստեղ ցանկացած մեթոդի կիրառման նպատակները խիստ բազմազան են, շատ դեպքերում անհրաժեշտություն է նպատակից կախված, մեթոդի ձևափոխումը: Ցանկացած դաս և դասարան եզակի է, ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է:

Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, երբ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելն այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ:

[2] Պետոյան Կ. Խ. Համագործակցային մեթոդների կիրառման հմտությունների ձևավորումը աշխարհագրության դասերին: Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան: Գիտական տեղեկագիր №1: Երևան, 2019թ., էջ 60:

1.2 Ուսուցման հնարների կիրառումն աշխարհագրության դասերին

Վերջին տարիներին հաճախ են հակադրում ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդները, ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոտեցումները: Ընդ որում՝ այդ հակադրումը կատարվում է այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ ինտերակտիվ ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Հետևաբար՝ աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը: Աշխարհագրության դասապրոցեսը բաժանենք երեք մասի և յուրաքանչյուրի համար առաջարկենք մեթոդներ և հնարներ՝

1. դասի սկիզբ,
2. նոր նյութի բացատրություն,
3. սովորածը պարզելու հնարներ:

Դասի սկիզբ: Յուրաքանչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Մարդկանց մոտ սովորաբար տպավորվում է հաղորդակցության սկզբի և վերջի հատվածները: Հաղորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին

լսել, թե ոչ: Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է: Եթե աշխարհագրության ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը, ապա դա էապես կնպաստի դասի արդյունավետ ընթացքին: Ներկայացնենք աշխարհագրության դասը սկսելու մի քանի հնարներ:

Գաղտնիքներ և հակասություններ: Երեխաները սիրում են գաղտնիքները, բնության օրենքներին հակասությունները: Դրանց առկայությունը և կապը ուսումնասիրվող թեմային մոտիվացնում է աշակերտներին: Երեխաները ցանկանում են րոպե առաջ բացահայտել գաղտնիքը, իմանալ ինպես է «գործում» հակասությունը:

Կանխատեսում: Սովորողների հետաքրքրությունը խթանելու նպատակով կարելի է նյութի հիմնական կարևոր հասկացությունները կամ վերնագիրը թերթիկների վրա գրել, կտրատել առանձին բառերի և պահել դասասենյակում՝ աչքից հեռու տեղերում: Դասը սկսելուց առաջ առաջարկել սովորողներին գտնել դրանք և համադրելով ստանալ վերնագիրը կամ գլխավոր միտքը: Օրինակ՝ կարող եք առանձին թղթերի վրա գրել՝ «դինգո», «կոալա», «բադակտուց», «էմու» բառերը և աշակերտներին առաջարկել գտնել տերմինը, որը միավորում է այս բառերը: Պատասխանն է՝ էնդեմիկ:

Անսպասելիություն, հանելուկներ: Երեխաները սիրում են զարմանալ: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը: Հետևաբար՝ աշխարհագրության դասն անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր է: Օրինակ՝ կարելի է դասի սկզբում հարցնել՝ ի՞նչ կլիներ, եթե... սկիզբ ունեցող հարցեր: Կամ դասը սկսել հանելուկով՝ տվյալ թեմային վերաբերող:

Գեղարվեստական սկիզբ, մեջբերումներ: Բավականին արդյունավետ է աշխարհագրության դասի սկզբում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել աֆորիզմ, թևավոր խոսք՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն: Գեղարվեստական սկիզբը, բառապաշարը, ստեղծագործություններում աշխարհագրական տեղանունների օգագործման վերհիշեցումը դրական են

անդրադառնում ուսուցմանը՝ բացելով աշակերտների ներաշխարհի դռները՝ աշխարհագրության քողարկված մուտքի համար:

Նոր նյութի բացատրություն: Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել: Հետևաբար՝ նոր նյութը բացատրելիս աշխարհագրության ուսուցիչը պետք է ուշադիր լինի, որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողությունը չի կարողանում հասկանալ նոր նյութը: Այդ առումով նոր նյութ բացատրելիս շատ կարևոր է այն փոքր կտորներով բացատրելը: 5-7 րոպե նյութը ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել, հարցերի միջոցով պարզել՝ արդյո՞ք հասկանում են երեխաները նոր ներկայացված նյութը: Ապա ևս 5-7 րոպե ծախսել նոր նյութի մատուցման վրա[3]:

Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ, քարտեզներ: Ուսուցչի խոսքը պետք է ուղեկցվի դրանցով: Ապացուցված է, որ աշակերտներն ավելի լավ են սովորում, երբ խոսքն ու պատկերը զուգակցվում են: Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ կապակցումը: Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ:

Յուրացրածը բացահայտելու հնարներ: Նոր նյութը բացատրելուց հետո աշխարհագրության ուսուցիչը դադար է վերցնում և աշակերտներին առաջարկում. օրինակ՝ Նոր Զելանդիա, Նիկարագուա, Էկվադոր պետություններից որի՞ մայրաքաղաքը կուզենայիք հիշել 10 տարի անց: Դրանք քողարկված հնարներ են ու ներգործում են ուսուցման ընթացքում մտնել աշակերտների երազանքների ոլորտ, այնտեղ առաջարկել և քննարկել նյութեր, որոնք դառնում են մտքերի կենտրոնացման և գիտելիքների յուրացման նախահիմք:

[3] Ասատրյան Լ. Թ., էկոլոգիական կրթության համակարգի կառավարման հիմնախնդիրը (դոկտորական ատենախոսություն): Երևան 2006թ., էջ 123:

1.3 Աշխարհագրության դասավանդման մեթոդների կիրառումը դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման նպատակով

Քանի որ ժամանակակից կրթությանը ներկայացվող «հասարակական պատվերն» է դպրոցականներին ոչ միայն զինել տարբեր գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, այլև սովորեցնել նրանց ինքնուրույն գտնել և յուրացնել հավաստի գիտելիքներ, կողմորոշվել անծանոթ իրավիճակներում, կայացնել գիտականորեն հիմնավորված որոշումներ՝ նպաստելով մեր մոլորակի բնապահպանական, հասարակական և քաղաքական հիմնախնդիրների հաղթահարմանը[4], հետևապես դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացումը ժամանակի հրամակայականն է: Ուսումնասիրելով առկա գրականությունը՝ նկատեցինք, որ շատ սահմանափակ են հայերենով այն աշխատանքները (գրքերը, գիտական հոդվածները, ձեռնարկները, ատենախոսությունները, առաջադրանքների կիրառման հանձնարարականները և այլն), որոնք աշխարհագրության ուսուցման գործընթացում ուղղված են հանրակրթական դպրոցի աշակերտների հետազոտական կարողությունների զարգացմանը: Ուստի նպատակ ունենք անդրադառնալու աշխարհագրության ուսուցման այն մեթոդներին, որոնք առավել արդյունավետ են դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման նպատակով կիրառելու համար, քանի որ համապատասխան ուսուցման մեթոդների տեղին օգտագործումն ապահովում է ցանկալի կրթական վերջնարդյունքներ: Նշենք, որ աշխարհագրության ուսուցման մեթոդները դասակարգվում են ըստ գիտելիքի ստացման աղբյուրի և իմացական գործունեության բնույթի[5]: Բացատրացուցադրական մեթոդների խումբը միտված է պատրաստի տեղեկությունների փոխանցմանը և ուսուցչի անմիջական միջնորդությամբ դպրոցականների՝ գիտելիքների, կարողությունների որոշակի

[4] Հանրակրթական հիմնական դպրոցի «Աշխարհագրություն և Հայաստանի աշխարհագրություն» առարկաների չափորոշիչներ և ծրագրեր: Հավելված №1 ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. հունվարի 23-ի N49-Ա/Ք հրամանի: Երևան, 2012թ., 15 էջ:

[5] Մինասյան Ա. Ա., Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները: Երևան, 2011թ., էջ 96:

ծավալի ձեռքբերմանը: Ստեղծագործական մեթոդները նպատակաուղղված են անձի ստեղծագործական գործունեության փորձի, ստեղծագործական կարողությունների և մտածողության զարգացմանը: Պրոբլեմային շարադրանքի մեթոդը միտված է դպրոցականներին իմացության բարդ ուղու ծանոթացմանը, որտեղ կիրառվում են որևէ բարդ հիմնահարցի ապացուցում պահանջող առաջադրանքներ: Այն նպաստում է հետազոտական հետևյալ կարողությունների զարգացմանը՝ կապեր ստեղծել ինֆորմացիայի տարբեր աղբյուրների միջև, մշակել տվյալներ և հաղորդել, զեկուցել արդյունքներ, մեդիայում ներկայացված ինֆորմացիայի վերլուծության և մեկնաբանման համար օգտագործել քննադատական գրագիտության կարողություններ[6]:

Խմբային հետազոտական մեթոդի կիրառումը նպաստում է ոչ միայն հետազոտական կարողությունների զարգացմանը, այլև խմբի անդամների համագործակցությանը, աշխատանքի արդյունավետության բարձրացմանը[7]:

Աշխարհագրության ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով կիրառվող վերոնշյալ մեթոդներին բնորոշ է պրոբլեմային իրավիճակների ստեղծումը և ուսումնական պրոբլեմների լուծումը: Սա ենթադրում է նաև նոր և անծանոթ իրավիճակներում ինքնուրույն կամ ուսուցչի ուղղորդման միջոցով տրված խնդրի լուծման եղանակների որոնում կամ ունեցած գիտելիքների կիրառում[8]:

Աշխարհագրության դասագործընթացի արդիականացման և այն առավել արդյունավետ դարձնելու գերակա պայման է համարվում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումն ու դրանց գործնական կիրառումը հանրակրթական դպրոցում:

---

[6] Ասատրյան Լ. Թ., էկոլոգիական կրթության համակարգի կառավարման հիմնախնդիրը (դոկտորական ատենախոսություն): Երևան 2006թ., էջ 98:

[7] Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս. և ուրիշներ: Համագործակցային ուսուցում: Երևան, 2006, էջ 38:

[8] Աջամօղլյան Ա. Ա., Աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացումը հանրակրթական դպրոցում՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ («Աշխարհագրություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն) Երևան: 2016թ., էջ 52:

Այսպես, նոր նյութի մատուցման և յուրացման գործընթացում նպատակահարմար ենք համարում համակարգչային ցուցադրական ծրագրերի կիրառումը, որոնց միջոցով առավել պատկերավոր և մատչելի ձևով են մատուցվում հիմնարար գիտելիքները: Նշված ծրագրային ապահովմամբ դասագործընթացում ուսուցիչը կարող է ներգրավել տարաբնույթ տեսահատվածներ և հոլովակներ, ուսումնական հաղորդումներ և վարժանքներ, ինչը կնպաստի յուրացվող տեսական գիտելիքների ամրապնդմանը:

Արդի աշխարհագրական կրթական գործընթացը չի կարող բավարարվել միայն երևույթի մասին ներկայացված տեղեկությունների պարզ մտապահմամբ, անհրաժեշտ են նաև պատճառահետևանքային կապերի առանձնահատկությունների վերլուծման ընդունակության զարգացումը[9]: Հետևապես տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն աշխարհագրության դասագործընթացում մեծապես նպաստում է դպրոցականների տեսողական և լսողական զգայարանների ինտենսիվ աշխատանքին, զարգացնելով նրանց տեսողական և լսողական հիշողությունը: Դրանց զուգահեռ, ցանկալի է օգտագործել նաև ուրվագծային քարտեզներ, խաչբառեր, գործնական պարապմունքները անցկացնելիս ամպայման կիրառել դիտազննական պարագաներ, կողմնացույց, հեռաչափ, բարձրաչափ, ջերմաչափ և այլն:

Ուսուցման ցանկացած մեթոդ ենթադրում է նպատակ և գործողությունների համակարգ, դրան հասնելու ուսումնական միջոցներ, ծրագրավորված արդյունք: Աշխարհագրության ուսուցչի խնդիրն է նաև ուսուցման ժամանակ առաջնորդվել տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հստակ մեթոդաբանությամբ:

[9] Աբրահամյան Ա. Գ., Ուսուցման կազմակերպումը երկհամակազմ դասարաններում «Աշխարհագրություն» առարկայի դասավանդման ժամանակ: ԱրՊՀ Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու): Ստեփանակերտ, 2017թ., էջ 27:

Եզրակացություններ, առաջարկություններ

Կատարելով աշխատանքը, եկանք ներքոհիշյալ եզրակացություններին.

❖ Աշխարհագրության բովանդակության ուսումնասիրությունը նպաստում է սովարողների շրջապատող աշխարհի բացահայտման և ընկալման կարողությունների ձևավորմանը:

❖ Աշխարհագրության դասավանդման մեթոդների կիրառման գլխավոր խնդիրն է նպաստել սովորողների աշխարհագրական մտածողության ձևավորմանը: Դրա համար անհրաժեշտություն է կիրառել ժամանակին համահունչ դասավանդման մեթոդներ, որոնք կհետաքրքրեն արդի աշխարհի սերնդին՝ նպաստելով «Աշխարհագրություն» գիտության շարունակականությունը պահպանելուն:

❖ Աշխարհագրության ուսուցման գործընթացում դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացումն ապահովելու համար նպատակահարմար է կիրառել ստեղծագործական ուսուցման մեթոդները (պրոբլեմային շարադրանք, մասնակի-որոնողական և հետազոտական), որոնք սահմանված կրթական նպատակներից ելնելով ապահովում են նրանց կողմից հետազոտական բնույթ կրող առաջադրանքների կատարում, դպրոցականների ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացում, հետազոտական կարողությունների զարգացում:

❖ Աշխարհագրության ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման մանկավարժական կարևոր պայմաններն են.

1. Տեղեկատվական տեխնոլոգիաների ռեսուրսների փոխներգործուն մակարդակների ճիշտ ընտրությունը,

2. Համակարգչային ծրագրային ռեսուրսները կարող են արդյունավետ դիտվել միայն դրանց լիարժեք տիրապետման դեպքում, թե սովորողի, թե ուսուցչի կողմից:

❖ Ուսուցման ընթացքում մեթոդների ճիշտ ընտրությունը աշակերտների մտավոր զարգացմանը նպաստող իմացական ընդունակությունների համակարգված ու հետևողական գործընթաց է: Դա նպաստում է տրամաբանական, տարածական, և այլ մտածողության զարգացմանը: Դա թույլ է

տալիս ձևավորել մեր շրջապատի աշխարհն ուսումնասիրելու՝ աշակերտների համար անհրաժեշտ մտածողության որոշակի ձևեր:

❖ Աշխարհագրության ուսուցման ժամանակ մեթոդների և հնարների միջոցով կարելի է դաստիարակել երեխաների մեջ այնպիսի անձնային հատկանիշներ, ինչպիսիք են սրամտությունը, բարոյականությունը, հարցերին՝ տարբեր ուղղություններով լուծում գտնելը, համեստությունը, հայրենասիրությունը և այլն:

❖ Արտադասարանական աշխատանքների կազմակերպումը ունի դաստիրակչական կարևոր նշանակություն: Այն օգնում է վարքագծային որոշ հմտությունների ձևավորմանը և զարգացմանը, ընկերային ջերմ հարաբերությունների ստեղծմանը, միջառարկայական կապերի ամրապնդմանը: Այդ աշխատանքները նպաստում են սովորողների համագործակցելու, հաղորդակցվելու կարողությունների ձևավորմանը:

Առաջարկում ենք.

➢ Դասի պլանավորման ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել և անպայման կիրառել տվյալ դասարանին համապատասխան որևէ հետաքրքրաշարժ անհատական այնպիսի հնար, որը բացի ուշադրություն գրավելուց և դաստիարակչական բնույթից կկրի նաև հետազոտական բնույթ:

➢ Միջառարկայական կապերի պահպանման, միաժամանակ աշակերտների մոտ ինքնուրույն սովորելու ցանկություն առաջացնելու համար հաճախակի կազմակերպել աշխարհագրական թեմատիկ շարադրություններ, դրանք դարձնելով ձևավորող գնահատման համար օժանդակ միջոց:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ա. Գ., Ուսուցման կազմակերպումը երկհամակազմ դասարաններում «Աշխարհագրություն» առարկայի դասավանդման ժամանակ: ԱրՊՀ Գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու): Ստեփանակերտ, 2017թ., 323 էջ:
2. Աջամօղլյան Ա. Ա., Աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացումը հանրակրթական դպրոցում՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ («Աշխարհագրություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն) Երևան: 2016թ., 174 էջ:
3. Ասատրյան Լ. Թ., էկոլոգիական կրթության համակարգի կառավարման հիմնախնդիրը (դոկտորական ատենախոսություն): Երևան 2006թ., 410 էջ:
4. Հանրակրթական հիմնական դպրոցի «Աշխարհագրություն և Հայաստանի աշխարհագրություն» առարկաների չափորոշիչներ և ծրագրեր: Հավելված №1 ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012թ. հունվարի 23-ի N49-Ա/Ք հրամանի: Երևան, 2012թ., 52 էջ:
5. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս. և ուրիշներ, Համագործակցային ուսուցում: Երևան, 2006, էջ 124:
6. Մինասյան Ա ., Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա: Երևան, 2013թ., 345 էջ:
7. Մինասյան Ա ., Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները: Երևան, 2011թ., 90 էջ:
8. Պետոյան Կ. Խ. Համագործակցային մեթոդների կիրառման հմտությունների ձևավորումը աշխարհագրության դասերին: Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան: Գիտական տեղեկագիր №1: Երևան, 2019թ., էջ 58-66:
9. Սարգսյան Խ. Բ., Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա: Երևան, 2002թ., 328 էջ: